

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 9/2

9 մարտի 2016 թ.

Քննարկվեց «Տրանսլայն» ՍՊԸ 03.02.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 25.01.2016թ-ի թիվ 87/03-16 որոշման դեմ:

«Տրանսլայն» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 25.01.2016թ. թիվ 87/03-16 որոշմամբ (այսուհետ նաև՝ Որոշում) «Տրանսլայն» ՍՊԸ-ից որոշվել է գանձել 8.058.446 դրամ պարտավորության գումար:

Որպես հիմք, ի թիվս այլնի, նշվել է նաև ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ 11.01.2016թ. թիվ 6118863 ակտը:

Որոշումն անօրինական է և պետք է անվավեր ճանաչվի հետևյալ պատճառաբանությամբ.

Որոշման մեջ վկայակոչվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դրամական պահանջները ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ըստ այդմ, անհրաժեշտ է պարզել, թե երբ է վարչական ակտը դառնում անբողոքարկելի:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի նորմերից հետևում է, որ վարչական ակտը անբողոքարկելի է դառնում ուժի մեջ մտնելուց երկու ամիս հետո:

Տվյալ դեպքում, եթե պայմանականորեն ընդունենք, որ 11.01.2016թ. թիվ 6118863 ակտն ուժի մեջ է մտել 12.01.2016թ., ապա այն անբողոքարկելի կդառնա երկու ամիս հետո՝ 12.03.2016թ-ին, և այդ ժամանակահատվածում չբողոքարկվելու պարագայում միայն դրանով արձանագրված գումարը կարող է դառնալ գանձման ենթակա:

Բացի այդ, Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի «բ» կետի վերլուծությունից հետևում է, որ հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ որոշումը հանդիսանում է միջամտող վարչական ակտ:

Հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելուն ուղղված գործողությունները կարգավորվում են «Հարկերի մասին» ՀՀ օրենքով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով: Ընդ որում, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածում, որպես հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ որոշման կայացման հիմք օրենսդիրը մատնանշել է «հարկային պարտավորությունների գծով գումարների

վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու» դեպքը: Հետևաբար նախևառաջ պետք է պարզվեր, արդյոք անցել է այն ժամկետը, որի ընթացքում տվյալ պարտավորությունները ենթակա էին վճարման, նշվածի համատեքստում հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ակտը դեռևս չի դարձել անբողոքարկելի:

Օրենքի 19-րդ, 20-րդ հոդվածի, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 3-րդ մասի 34-րդ հոդվածի, 35-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ վարչական վարույթը վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված լինելու դեպքում հարուցման փուլը սկսված է համարվում այդ մարմնի նախաձեռնության դրսևորման պահից:

Ընդ որում, վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է:

Հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելուն ուղղված գործերի քննության մասին վարույթի մասնակիցներին ծանուցելը պետք է նպատակ հետապնդի ապահովել վարույթի մասնակցին լսելու հնարավորությունը:

Տվյալ դեպքում ՀՀ ֆինանսների նախարարությունը չհարուցելով ժամանակին չվճարված գումարն Ընկերությունից գանձելուն ուղղված վարչական վարույթ, չիրականացնելով ընթացիկ փուլ, կայացրել է միջամտող վարչական ակտ՝ Որոշումը, այսինքն՝ սահմանափակվել է միայն եզրափակիչ փուլով այն դեպքում, երբ իրականացվող վարույթն ուղղված չի եղել անմիջական սպառնացող վտանգը կանխելուն կամ արդեն իսկ առաջացած վտանգի հետևանքները վերացնելուն, իսկ վերոհիշյալ պատճառաբանություններն էլ բացառում են օրենքով նախատեսված միայն եզրափակիչ փուլով սահմանափակվելու հնարավորությունը:

Այսպիսով, Որոշումն ընդունվել է Օրենքի 19-րդ, 20-րդ, 30-րդ, 35-րդ, 88-րդ հոդվածների խախտումներով, հետևաբար Օրենքի 63-րդ հոդվածի հիմքով այն անվավեր է:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 25.01.2016թ. թիվ 87/03-16 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով «Տրանսլայն» ՍՊԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 22.01.2016թ-ի դրությամբ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 8.058.446 դրամ, որից հաստատագրված վճարի ապառք 3.178.377 դրամ, տույժ 1.051.833 դրամ, տուգանք 1.191.072 դրամ, եկամտային հարկի ապառք 608.646 դրամ, տույժ 48.002 դրամ, ԱԱՀ-ի ապառք 136.356 դրամ, տույժ 479.536 դրամ, տուգանք 602.735 դրամ, հաստատագրված վճարի 10 տոկոսի ապառք 264.684 դրամ, տույժ 109.859 դրամ, տուգանք 132.346 դրամ, ՀԴՄ տուգանք 210.000 դրամ, 30 տոկոս 45.000 դրամ: Նշված

պարտավորություններն առաջացել են 2014թ-ի օգոստոսից մինչև 2015թ-ի դեկտեմբեր ամիսների համար հաշվարկված հաստատագրված վճարներից, հոկտեմբերից դեկտեմբեր ամիսների եկամտային հարկի և ԱԱՀ-ի հաշվարկներից, 2012-2015թ.թ. ԱԱՀ-ի գումարները ուշ վճարելու արդյունքում, 11.01.2016թ-ի թիվ 6118863 ստուգման ակտից, 24.07.2015թ-ի թիվ 6109237 ստուգման ակտից:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 25.01.2016թ-ին ընդունվել է թիվ 87/03-16 որոշումը (այսուհետ նաև Որոշում) «Տրանսլայն» ՍՊԸ-ից 8.058.446 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Տվյալ դեպքում Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունները մասնավորապես առաջացել են ընկերության կողմից ներկայացված հաշվարկ-հաշվետվություններում արտացոլված, ինչպես նաև 24.07.2015թ-ի թիվ 6109237 և 11.01.2016թ-ի թիվ 6118863 ստուգման ակտերով լրացուցիչ առաջադրված պարտավորությունները սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով, սակայն ընկերության գանգատում որպես Որոշումն անվավեր ճանաչելու հիմք բերված է միայն 11.01.2016թ-ի թիվ 6118863 ստուգման ակտն անբողոքարկելի չդառնալու հանգամանքը:

Հարկ է նշել, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն. «Հարկ վճարողները թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար հարկի գումարը, ինչպես նաև սույն օրենքի 13.13-րդ հոդվածի 1-ին մասի, 23-27, 28.5 և 31 հոդվածների համաձայն հաշվարկված հարկային պարտավորությունները և սույն օրենքի 26-րդ հոդվածի երրորդ պարբերությամբ սահմանված վնասի հատուցման գումարները բյուջե են վճարում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում: Ստուգման ակտով առաջադրված հարկի գումարների նկատմամբ նշված 10-օրյա ժամկետում սույն օրենքի 23 հոդվածով սահմանված տույժերը չեն հաշվարկվում»:

Վերոգրյալից հետևում է, որ ստուգման արդյունքում կազմված ակտով առաջադրված պարտավորությունները, այն կողմին ներկայացվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում ընկերության կողմից պետք է վճարվեին պետական բյուջե:

Իր հերթին, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն. «Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս»:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով ընկերության կողմից համապատասխան ժամանակահատվածների համար ներկայացված հաշվետվություններում արտացոլված, վերոգրյալ ստուգման ակտերով լրացուցիչ առաջադրված պարտավորությունները օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չվճարելու հանգամանքը, ինչպես նաև ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 25.01.2016թ-ին կայացվել է թիվ 87/03-16 որոշումը, ընկերությունից ժամանակին

չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին, որը հիմնավոր է և ենթակա է կատարման:

Գանգատում բերված պնդումների վերաբերյալ, որ ընկերությանը չի ծանուցվել վարչական վարույթի հարուցման մասին, ընկերությանը հնարավորություն չի տրվել արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ, հարկ է նշել հետևյալը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթը հարուցվում է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը:

Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է:

Իր հերթին, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի համաձայն՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Քննարկվող դեպքում հարկ վճարողից ժամանակին չվճարված պարտավորությունների գումարները գանձելու նպատակով հարուցված վարչական վարույթի մասին գանգատներին ծանուցելու պարտականություն չի առաջացել, քանի որ Որոշումն ընդունվել է հարկային մարմնում առկա ապացույցների հիման վրա, երբ վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցել երեք օրը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը՝

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 25.01.2016թ-ի թիվ 87/03-16 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

